ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի ելույթը ՀՊՏՀ 22–րդ գիտական նստաշրջանի բացմանը

Մեծարգո Վարչապետ,

Հարգարժան հյուրեր, գործընկերներ,

Ուրախ եմ ողջունել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին:

Նստաշրջանը կանցնի «Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» խորագրի ներքո:

Համալսարանում անցկացվող գիտական նստաշրջանները փորձագիտական յուրօրինակ հարթակ են Հայաստանի և համաշխարհային տնտեսության հրատապ հիմնախնդիրների քննարկման համար:

Այստեղ ավանդաբար հավաքվում են պետական կառավարման մարմինների, քաղաքական և գործարար ոլորտի ներկայացուցիչներ, համալսարանի գիտամանկավարժական անձնակազմը և, իհարկե, մեր գործընկերները մյուս համալսարաններից:

Համալսարանական գիտական նստաշրջանների նպատակը մեկ տարում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համախմբված ներկայացումն է և հետազոտությունների հետագա ուղղությունների նախանշումը:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որդեգրել է համալսարանական գիտության զարգացման քաղաքականություն, ինչը մեծ պատասխանատվություն ու պատիվ է մեզ համար: Համալսարանական գիտնականները, բացի իրենց շնորհակալ ու արժանապատիվ առաքելությունից՝ ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներով և կառավարման արդիական գործիքներին տիրապետող մասնագետների պատրաստումից, ունեն ևս մեկ կարևոր առաքելություն, որը, կարծում եմ, դեռևս լիարժեք իրացված չէ: Այն է՝ հանրապետության Կառավարության հայտարարած տնտեսության զարգացման գերակայությունների կենսագործման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հարկ է նշել, որ այդ տեսակետից Հայաստանի տարբեր համալսարաններ, այդ թվում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, մշտապես հանդես են եկել նախաձեռնություններով:

Ակնհայտ է, որ արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող գործընթացները և համաշխարհային տնտեսության զարգացման վերջին շրջանի միտումներն ի հայտ են բերում նորանոր մարտահրավերներ, որոնք պահանջում են համարժեք պատասխաններ:

ՀՀ կառավարությունը հետաձգնաժամային ժամանակահատվածի համար սահմանել է երեք գերակայություն՝

- տնտեսության մրցունակության բարձրացում՝ որպես երկարաժամկետ կայուն աճի գլխավոր պայման,
- մարդկային կապիտալի զարգացում,
- ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Արձագանքելով ՀՀ կառավարության 2012-2017թթ. ծրագրին, ինչպես նաև կարևորելով բուհական գիտության մասնակցությունը երկրի զարգացման ծրագրերի իրականացմանը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում հայտարարվել է նշված գերակայություններին առնչվող գիտահետազոտական նախագծերի ներքին գիտական դրամաշնորհների մրցույթ: Ներկայացվել է 19 հայտ՝ շուրջ 50 մլն դրամ ընդհանուր արժողությամբ: Ներկայումս այդ նախագծերը փորձաքննության փուլում են, որից հետո մրցութային հանձնաժողովը որոշում կկայացնի դրամաշնորհների հատկացման վերաբերյալ: Այս նախաձեռնությունն ընդամենը մեկն է միջոցառումների շարքից, որոնք նախատեսվել է իրականացնել համալսարանում գիտահետազոտական գործունեության ակտիվության բարձրացման ուղղությամբ: Նախատեսվում է ստեղծել հետազոտական խմբեր և կիրառել նոր, ոչ ստանդարտ մոտեցումներ՝ երկրի զարգացման հրատապ հիմնախնդիրների առնչությամբ լուծումներ մշակելու, մեր գիտնականների ակադեմիական շարժունությունը բարձրացնելու նպատակով:

Համալսարանի գիտնականները պարբերաբար մասնակցում են միջազգային գիտաժողովներին, արտասահմանյան պարբերականներում հրապարակում իրենց հետազոտությունների արդյունքները, սակայն, հետազոտությունների միջազգայնացման առումով դեռևս շատ անելիքներ կան: Այդ ուղղությամբ հնարավոր չէ էական հաջողությունների հասնել առանց մեր մյուս համալսարանների հետ սերտ համագործակցության: Համագործակցության ձևաչափերի և ուղղությունների մշակման համար, անշուշտ, կպահանջվեն հաճախակի հանդիպումներ ու քննարկումներ:

Այդ տեսակետից, այս գիտական նստաշրջանը միտված է նաև այդպիսի քննարկումների ակտիվացմանը:

Հարգելի մասնակիցներ, մեզ սպասվում են նորարական քաղաքականության, ֆինանսական շուկաների և ենթակառուցվածքների զարգացման, սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններին նվիրված հարցերի քննարկումներ, որոնք կարևոր են երկրի տնտեսության մրցունակության բարձրացման տեսանկյունից:

Հարգելի գործընկերներ, մեզ համար մեծ պատիվ է գիտական նստաշրջանին հանրապետության վարչապետի մասնակցությունը, որի համար բոլորիս անունից շնորհակալություն եմ հայտնում մեծարգո վարչապետին:

Շնորհակալություն եմ հայտնում նաև մեր գործընկեր համալսարաններին, պետական կառավարման մարմիններին,

Կենտրոնական բանկին, արդյունաբերողների և գործարարների միությանը գիտական նստաշրջանին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

Նստաշրջանի բոլոր մասնակիցներին ցանկանում եմ արդյունավետ ու արգասաբեր աշխատանք:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ